


«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ
տեխնիկական տնօրեն

 Ա. Գևորգյան
07 07 2017թ

ԱՌԱՐՁՄԱՆ ԱՌԱՋԱԴԴԱՆՔ

«Երևան ՋԷԿ» ՓԲԸ խմելու ջրի Dy 500 մմ տրամագծով ստորգետնյա մետաղական խողովակաշարի վերակառուցում

№	Հիմնական տվյալների և պահանջների ցանկը	Նկարագիրը
1	Նախագծման հիմքը	
2	Գտնվելու վայրը	ք.Երևան, Արին Բերդի 3 –րդ նրբանցք, թիվ 3
3	Շինարարության տեսակը	Վերակառուցում
4	Նախագծման փուլայնությունը	Աշխատանքային նախագիծ
5	Ֆինանսավարման աղբյուրը	«Երևան ՋԷԿ» ՓԲԸ միջոցներ
6	Պահանջներ տարբերակային մշակման վերաբերյալ	Նախագծի նախնական տարբերակները համաձայնեցնել Պատվիրատուի հետ
7	Օբյեկտի նշանակությունը հիմնական ռուցակները	և Խողովակաշարը կառուցվել է 1960-ական թվականներին: Ներկայումս խողովակաշարի ստորգետնյա որոշ հատվածներ գտնվում են վթարային վիճակում, որի պատճառով անհնար է դառնում խողովակաշարի անխափան շահագործումը: ՀՀԳՑԷ-ի անխափան ջրամատակարարումը ապահովելու համար հրատապ անհրաժեշտություն է առաջացել մոտ 500 մ ստորգետնյա Dy500մմ տրամագծով հատվածի վերակառուցման վերգետնյա տարբերակով:

8	Պահանջներ նախագծի կազմ և բովանդակության վերաբերյալ	<ul style="list-style-type: none"> Նախագծել P600 կՊա, 700 մ³/ժամ թողունակությամբ վերգետնյա ջրի մետաղական խողովակաշար, արտաքին ջերմամեկուսիչ շերտով, այլումինե թիթեղով պատված: Խողովակաշարի սկիզբը ընդունել Արտաշատի ջրանցքի անցումից հետո D800 մմ մետաղական խողովակից: Որտեղից նոր կառուցվող էստակադան (մոտ 500մ երկարությամբ) կմիանա գործող ջրագծի էստակադային: Խողովակաշարի առանձին հատվածներում՝ երկաթգծի 3 և ավտոճանապարհի 3 հատման տեղերում նախատեսել էստակադային անցումներ: Երկաթգծի անցումների տեխնիկական պայմանները համաձայնեցնել երկաթգծի սեփականատիրոջ հետ: Խողովակաշարի ուղեգծի ընտրման ժամանակ հաշվի առնել տեղամասում գոյություն ունեցող էստակադաների օգտագործման հնարավորությունը՝ ելնելով դրանց վիճակից: Տեղամասի տոպոգեոդեզիական աշխատանքների կատարման ժամանակ պարտադիր ճշտել և հանույթի վրա արտահայտել ստորգետնյա հաղորդակցուղիների արկայությունը և դիրքը, որի համար կատարել նաև. - խողովակաշարի անցման գոտու հանույթ 1:500
---	--	---

			<p>մաշտաբով, երկարությունը՝ մոտավորապես 500մ, լայնությունը՝ 20մ</p> <ul style="list-style-type: none"> - հատակագծի վրա ցույց տալ բոլոր ստորրգետնյա և վերգետնյա կոմունիկացիաները - ցույց տալ բոլոր հենարանները և թռիչքների երկարությունները, որոնց վրայով անցնում են կոմունիկացիաներ: Նշել հենարանների վերին նիշերը: • Կատարել տեղամասի ինժեներաերկրաբանական հետազոտություն:
9	Աշխատանքային նախագծի կազմը		<p>Հատոր 1. Հիդրոտեխնիկական լուծումներ</p> <p>Հատոր 2. Նախահաշվային փաստաթղթեր</p> <p>Հատոր 3. Ինժեներաերկրաբանական հետազոտության եզրակացություն:</p>
10	Փորձաքննության իրականացում		<p>Աշխատանքային նախագիծ մշակող ընկերությունը նախագիծը հանձնում է Պատվիրատուին 5 օրինակից տպագրված, փորձաքննության դրական եզրակացության հետ և էլեկտրոնային տարբերակով:</p>

ՆՆԱԲ-ի պետ



Ա. Թաղայան

ԿՏԱ-ի պետ



Ս. Չիդեմյան